## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ԵԱ-ԳՀԾՁԲ-25/92 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **13 հունվարի 2026թ.**

2026թ. հունվարի 13-ին ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ դիզելային շարժիչի ինժեկտորի նորոգման ծառայության ձեռքբերման ԵԱ-ԳՀԾՁԲ-25/92 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Սուքիասյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, |
| Վ. Սանթուրյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ, |
| Խ. Մալոյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շահագործման բաժնի պետ, |
| Ա. Գալստյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տեխնիկական բաժնի պետ, |
| Ս. Ավագյան՝ | «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ավագ հաշվապահ, գլխավոր հաշվապահի պ/կ |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակներում 2026թ. հունվարի 07-ի № 2 արձանագրությամբ հաղթող ճանաչված «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկության ստուգման անհրաժեշտության մասին:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2026Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 07-Ի № 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2026թ. հունվարի 13-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ առաջացած հիմնավոր կասկածով պայմանավորված անհրաժեշտ է ստուգել «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկությունը:

Հիմք ընդունելով վերը նշված փաստական հիմնավորումները, Հանձնաժողովը որոշեց Կարգի 67-րդ կետի կիրառմամբ կասեցնել Ընթացակարգը և ծանուցել մասնակից «Ս ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին՝ վերջինիս առաջարկելով մինչև 2026թ. հունվարի 14-ի ժամը 18:00-ն ներառյալ ներկայացնել Ընթացակարգի հրավերին վերջինիս համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր, այդ թվում հիմնավորում՝ ծառայություն մատուցող կենտրոնը արդյոք ունի՞ հետևյալ նվազագույն տեխնիկական հնարավորությունները և պայմանները, մասնավորապես.

1. Դիզելային շարժիչների (Գազել Սիթի և Հայգեր) ինժեկտորի նորոգման աշխատանքների համար նախատեսված համապատասխան սարք սարքավորումներ, եթե այո, ապա անհրաժեշտ է ներկայացնել:

2. Արդյո՞ք մասնակցի կողմից ներկայացված տարածքը հանդիսանում է «Ս Մոթորս» ՍՊԸ-ի սեփականությունը: Անհրաժեշտ է ներկայացնել տվյալ տարածքի սեփականության կամ վարձակալության վերաբերյալ հավաստող հիմնավոր փաստաթղթեր:

3. 09.01.2026թ. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի մասնագետների կողմից Շիրակի 300 հասցե կատարած այցի ընթացքում կատարվել է տարածքի և կատարվելիք ծառայությունների ուսումնասիրություն և պարզվել է, որ տվյալ տարածքում պատվիրատուի կողմից հայտարարված մրցույթի շրջանակներում տեխնիկական բնութագրին համապատասխան որևէ ծառայություն չի իրականացվում: Ավելին՝ նույն օրը «Ս Մոթորս» ՍՊԸ-ի տնօրենի կատարած հայտարարություններից պարզվել է, որ ծառայությունները փաստացի իրականացվում են Լենինգրադյան հասցեում գտնվող «Բլից» տեխսպասարկման կենտրոնում, այլ ոչ թե տեխնիկական բնութագրով սահմանված «Շիրակի 9 հասցեից առավելագույնը 4կմ հեռավորության վրա» և նշել է, որ ընթացքում սարքավորումներն ու գործիքները կարող են տեղափոխել իրենց կողմից ներկայացված «Շիրակի 300» հասցե:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ և ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը սահմանել 2026 թվականի հունվարի 14-ին ժամը 18:00-ին՝ ՀՀ, ք. Երևան, Ծննոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան _______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան _______________

Խ. Մալոյան _______________

Ա. Գալստյան _______________

Ս. Ավագյան _______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան _______________